ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՀՈՒՆՎԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025



Հիմնական տնտեսական ցուցանիշներ

Տնտեսական ակտիվության աճը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 9.2%:

Արդյունաբերություն. Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին աճել է 4.7%-ով: Արդյունաբերության աճի վրա դրական են ազդել մշակող արդյունաբերության 3.3% և հանքարդյունաբերության 6.4% աճերը:

Առևտուր. Ներքին առևտրի շրջանառությունը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3.0%-ով:

Գյուղատնտեսություն. Գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության ծավալի աճը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 5.6%, որից գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն աճել է 5.6%-ով:

Ըստ ենթաոլորտների աճերը հետևյալն են՝

- բուսաբուծություն՝ 9.7%, անասնաբուծություն՝ 1.8%, անտառտնտեսություն 64.8% և ձկնորսություն՝ 23.0%):

Շինարարություն. Շինարարության ծավալի աճը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 20.2%: Այս աճին նպաստող հիմնական ֆինանսական աղբյուրներն են հանդիսացել հետևյալները՝ կազմակերպությունների միջոցներ (աճը՝ 10.3%), բնակչության միջոցներ (աճը՝ 20.4%) և պետական բյուջե (աճը՝ 37.2%) միջոցները:

Ծառայություններ: Ծառայությունների ծավալը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.9%-ով: Աճ է գրանցվել բոլոր ենթաոլորտներում, բացառությամբ տրանսպորտի (նվազումը՝ -1.2%):

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ 2025թ. հունվար-դեկտեմբեր՝ աճողական



ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Զբոսաշրջության դինամիկա (2024-2025թթ. հունվար-դեկտեմբեր).

- 2025 թվականի հունվար-դեկտեմբերին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 2,263,642 զբոսաշրջիկ, ինչը 2.5%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:
- 2025 թվականի հունվար-դեկտեմբերին Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկները կազմել են բոլոր ժամանածների 40.7%-ը, 2024 նույն ժամանակահատվածի 42.5%-ի համեմատ:

- Ընդհանուր ժամանումների աճը հիմնականում պայմանավորված է հետևյալ երկրներից զբոսաշրջիկների թվաքանակի աճով. Վրաստան (+22,530 զբոսաշրջիկ) Չինաստան (+12,178 զբոսաշրջիկ), Իտալիա (+6,701 զբոսաշրջիկ), Իրան (+5,911 զբոսաշրջիկ), Գերմանիա (+5,419 զբոսաշրջիկ):

Գծապատկեր 2. Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ (հազար)



Գծապատկեր 3. Ռուսաստանից զբոսաշրջիկների քանակ



Ծագման երկիր

2025 թվականի հունվար-դեկտեմբեր

Երկիր	Զբոսաշրջիկների քանակ	Աճ/նվազում, %
Ռուսաստան	921,704	-1.7
Վրաստան	288,578	8.5
Իրան	182,364	3.3
ԱՄՆ	60,891	3.3
Չինաստան	45,004	37.1
Ֆրանսիա	35,847	18.7
Գերմանիա	34,136	18.9
Հնդկաստան	28,450	-34.9
Ուկրաինա	27,648	-2.1
Իտալիա	22,669	42.0



Զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակը՝

2,263,642

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Արտահանման ծավալը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 8,395.4 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 36.1%-ով կամ - 4,741.0 միլիոն ԱՄՆ դոլարով:

Հայաստանի 2025 թվականի հունվար-դեկտեմբերին արտահանված հիմնական ապրանքներ են (աճի ցուցանիշները համեմատված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ).

- **Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի՝ $1,350.6 միլիոն (նվազումը 4.2 անգամ):**
- **Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր՝ $899.1 միլիոն (աճը՝ 30.4%)**
- **Սիգարետ և սիգար՝ $621.8 միլիոն (աճը՝ 54.1%)**
- **Պղինձի հանքաքար, խտանյութ՝ $664,8 միլիոն (աճը՝ 19.1%)**
- **Ոսկերչական իրեր՝ $1,114.9 միլիոն (աճը՝ 22.9%)**

Գծապատկեր 4. 2025թ. հունվար-դեկտեմբերի ընթացքում արտահանման ծավալ, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 5. 2025 թվականի հունվար-դեկտեմբերի ընթացքում առավելագույն արտահանման ծավալ ունեցող 10 ապրանք, մլն. ԱՄՆ դոլար



ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

2025 թվականի հունվար-դեկտեմբերին հիմնական առևտրային գործընկեր-արտահանողներն են՝

- Ռուսաստան. արտահանումը կազմել է 2,964.4 միլիոն ԱՄՆ դոլար, նվազել է -6.9%-ով:
- Արաբական Միացյալ Էմիրություններ. արտահանումը կազմել է 2,054.5 միլիոն ԱՄՆ դոլար, նվազել է 60.9%-ով:
- Չինաստան. արտահանումը կազմել է 763.6 միլիոն ԱՄՆ դոլար, նվազումը կազմել է -30.4%:
- Իրաք. արտահանումը կազմել է 331.6 միլիոն ԱՄՆ դոլար, աճը կազմել է 34.7%:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ չորս երկրների տեսակարար կշիռը կազմում է Հայաստանի արտահանման ծավալի 72.9%-ը:

Գծապատկեր 6. 2025թ. հունվար-դեկտեմբերի ընթացքում արտահանումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ներմուծումը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 13,034.9 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4,030.2 մլն ԱՄՆ դոլարով կամ -23.6%-ով:

2025 թվականի հունվար-դեկտեմբերին Հայաստան ներմուծված հիմնական ապրանքներն են (տվյալները ներկայացված են նույն ժամանակահատվածի համեմատ)

- **Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի՝ $2,294.7 միլիոն (նվազումը կազմել է 2.5 անգամ)**
- **Հեռախոսային և հեռագրային ապարատ,մոդեմ, մասեր՝ $1,085.5 միլիոն (նվազումը կազմել է 39.8%)**
- **Ավտոմեքենա մարդատար՝ 653.6 մլն ԱՄՆ դոլար (աճը կազմել է 25.7% տոկոս)**
- **Բնական և հեղուկ գազ՝ $575.3 միլիոն (աճը կազմել է 3.2%)**
- **Նավթ և նավթամթերք (բենզին, մազութ, նավթ, դիզելային վառելիք, յուղ)՝ $513.8 միլիոն (աճը կազմել է 9.4%)**

Գծապատկեր 7. 2025թ. հունվար-դեկտեմբերի ընթացքում ներմուծման ծավալ, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 8. 2025 թվականի հունվար-դեկտեմբերի ընթացքում առավելագույն ներմուծման ծավալ ունեցող 10 ապրանք, մլն. ԱՄՆ դոլար



ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

2025 թվականի հունվար-դեկտեմբերին հիմնական առևտրային գործընկեր-ներմուծողներն են՝

- Ռուսաստան՝ 4,870.9 միլիոն ԱՄՆ դոլար, նվազել է 48.4%-ով
- Չինաստան՝ 1,317.1 միլիոն ԱՄՆ դոլար, 11.4% աճ
- Վրաստան՝ 774.0 միլիոն ԱՄՆ դոլար, -1.5% նվազում
- Իրան՝ 690.4 միլիոն ԱՄՆ դոլար, 7.9% աճ
- ԱՄԷ՝ 425.1 միլիոն ԱՄՆ դոլար, -4.9% նվազում
- Գերմանիա՝ 404.6 միլիոն ԱՄՆ դոլար, -12.6% նվազում
- Իտալիա՝ 389.8 միլիոն ԱՄՆ դոլար, 13.2% աճ:

Գծապատկեր 9. 2025թ. հունվար-դեկտեմբեր ընթացքում ներմուծումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ պաշտոնապես զբաղվածների թիվը կազմել է 821.5 հազար աշխատող, ինչը 2024 թվականի դեկտեմբերի համեմատ աճել է 5.9%-ով:

2025 թվականի դեկտեմբերի վերջին զբաղվածության առաջատար ոլորտներն են՝

- Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում՝ 142,607 աշխատող:
- Կրթություն՝ 130,311 աշխատող:
- Մշակող արդյունաբերություն՝ 94,998 աշխատող:
- Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում՝ 56,078 աշխատող:
- Տեղեկատվություն և կապ՝ 46,055 աշխատող:
- Կացության և հանրային սննդի կազմակերպում՝ 43,395 աշխատող:

2024 թվականի դեկտեմբերի համեմատ զբաղվածությունն աճել է գրեթե բոլոր ոլորտներում, բացառությամբ սպասարկման այլ ծառայությունների (-1.3%):

Գծապատկեր 10. Ֆորմալ զբաղվածություն, հազար աշխատող



Գծապատկեր 11. Ֆորմալ զբաղվածություն (առաջատար ոլորտներ) դեկտեմբեր, 2025 տեսակարար կշիռ %



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2025 թվականի հունվար-դեկտեմբերին միջին ամսական աշխատավարձը կազմել է 303,140 դրամ, ինչը 5.6%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

- Պետական հատվածի միջին աշխատավարձը կազմել է 239, 369 դրամ, աճը՝ 6.5%:
- Մասնավոր հատվածի միջին աշխատավարձը կազմել է 327, 604 դրամ, աճը՝ 5.1%:

- Աշխատավարձի առավելագույն աճ գրանցվել է «փոխադրումների և պահեստային տնտեսության»՝ + 12.9% և «վարչարարական և օժանդակ գործունեության»՝ +12.6% ենթաոլորտներում:

Գծապատկեր 12. Միջին աշխատավարձն ըստ տնտեսության ճյուղերի հունվար- դեկտեմբեր 2025, հազար ՀՀ դրամ



Գծապատկեր 13. Աշխատավարձի փոփոխությունն ըստ ճյուղերի Հունվար-դեկտեմբերին 2025թ., %



ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ

ՆԵՐՀՈՍՔ ԵՎ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔ

2025 թվականի հունվար-դեկտեմբերին դրամական փոխանցումների ընդհանուր ներհոսքը կազմել է 5,979.9 միլիոն դոլար, ինչը 2.4%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

2025 թվականի հունվար-դեկտեմբերրին դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է 1,639.5 միլիոն դոլար, ինչը 8.6%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Առավելագույն դրամական փոխանցումները ստացվել են հետևյալ երկու երկրներից (որոնց գումարային տեսակարար կշիռը կազմել է ընդհանուր ներհոսքի 77.0%-ը)՝

- Ռուսաստան՝ 3,878.3 միլիոն դոլար (աճը՝ +1.5%)
- ԱՄՆ՝ 733.8 միլիոն դոլար (աճը՝ +6.3%):

Գծապատկեր 14 Դրամային փոխանցումներ և փոխարժեք



Գծապատկեր 15 Դրամային հոսքերն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար և տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ



ԳՆԱՃ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ



Գծապատկեր 16. Գնաճի մակարդակ 2025թ. դեկտեմբերին տարեկան տոկոսային փոփոխություն



Հայաստանում գնաճը 2025 թվականի հունվարից դեկտեմբեր ամիսների ընթացքում ամենացածրն է տարածաշրջանի երկրների համեմատ:

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ ՄԻՏՈՒՄ

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) 2025 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 3.3%, իսկ դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 3.3%:

Ըստ տնտեսության առանձին հատվածների 2025 թվականի 4-րդ եռամսյակում գների նվազում է գրանցվել շինարարության, բեռնափոխադրումների և արտահանման գծով, որոնք 2024 թվականի 4-րդ եռամսյակի նկատմամբ կազմել են համապատասխանաբար՝ -4.8; -2.1 և -1.0%:

Գծապատկեր 17. Սպառողական գների ինդեքսի դինամիկան Հայաստանում, %



Գծապատկեր 18. Գների տոկոսային փոփոխություններն ըստ տնտեսության առանձին հատվածների, նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, %



Հայաստանի պետական պարտքը 2025 թվականի դեկտեմբերի վերջին կազմել է 14,531.0 միլիոն դոլարի:

- Արտաքին պարտք՝ 7,036.6 միլիոն դոլար (+9.0% 2024 թվականի դեկտեմբերի համեմատ):
- Ներքին պարտք՝ 7,494.7 միլիոն դոլար (+17.3% 2024 թվականի դեկտեմբերի համեմատ):

Արտաքին պարտքը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- Պետական պարտք՝ ընդհանուր արտաքին պարտքի 93.0%-ը:
- Կենտրոնական բանկի պարտք՝ ընդհանուր արտաքին պարտքի 7.0%-ը:

Բյուջեի եկամուտները 2025 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել են 2,886.2 միլիարդ դրամ (+11.9% 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ): Այս աճը պայմանավորված է հարկերից և վճարներից ստացված եկամուտներով, որոնք նույն ժամանակահատվածում աճել են 14.0%-ով՝ հասնելով 2725.2 միլիարդ դրամի:

2025 թվականի հունվար-դեկտեմբերին բյուջեի ծախսերը կազմել են 3,305.3 միլիարդ դրամ (+11.8%՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ): Դրանցից՝

- Ընթացիկ ծախսեր. աճել են 8.2%-ով (պետական հատվածի աշխատողների աշխատավարձեր, ապրանքների և ծառայությունների գնումներ, տոկոսագումարների վճարումներ, դրամաշնորհներ և այլն):
- Ոչ ֆինանսական ակտիվներ. աճել են 27.9%-ով (գնումներ և այլ գործունեություն):

Գծապատկեր 19. Հայաստանի պետական պարտքը, մլն. ԱՄՆ դոլար



Գծապատկեր 20. Հայաստանի բյուջեի եկամուտը և ծախսերը, մլրդ. ՀՀ դրամ